ՀԱՄԵՍՏ ԷՐ ՈՒ ՔԱՋԱՐԻ



ԲԱԳՐԱՏ ՍԱՀԱԿԵԱՆ
(1961-1998)

Բագրատը ծնուել է 1961 թուականին, Ապրիլին, Ուրմիայի շրջանում, համեստ ընտանիքում: 1979 թուականին, դպրոցը աւարտելուց յետոյ, այլեւս չի շարունակել ուսումը, զբաղուել է շինարարական աշխատանքով եւ բաւականին խորացել է իր մասնագիտութեան մէջ: 1981 թուականին, Իրան-Իրաք պատերազմի ընթացքին, ծառայել է պարսկական բանակում, մասնակցել է պատերազմական գործողութիւններին եւ ձեռք է բերել մարտական մեծ փորձութիւն: Ծառայութիւնը տեւել է 30 ամիս:

92 թուականի Նոյեմբերի վերջերին եկաւ Հայաստան եւ ուղղակիօրէն մեկնեց Ղարաբաղ: Ծառայել է Շուշիի առանձնակի գումարտակում: Բագրատը մինչեւ Հայաստան գալը ունեցել է դաշնակցականի լաւ կենսագրութիւն. 18ը հազիւ լրացած անդամակցել է Հ.Յ.Դ. շարքերին: Եղել է շրջանի Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան վարիչ: Ունէր ռազմական անհրաժեշտ փորձառութիւն, իսկ թուրքերէն լեզուին տիրապետում էր գերազանց: Նկատի առնելով այդ ամէնը՝ հրամանատարութիւնը որոշեց Բագրատի տեղը՝ հետախուզական վաշտի մէջ: Կարճ ժամանակամիջոցում նա այդտեղ էլ իրեն կարողացաւ դրսեւորել ամենալաւ հայ զինուորին վայել բոլոր բարեմասնութիւններով, որոնք հիմք են դառնում մարտական (զինուորական) միջավայրում եւ պատերազմական ծանր կացութեան մէջ սիրելու մարդուն թէ՛ ընդունակութեանց եւ թէ իր մարդկային նկարագրի համար: Բագրատը գումարտակի տղաների վրայ խորը տպաւորութիւն է թողնում եւ իր պահուածքով յատկապէս լաւ ներգործութիւն է թողնում երիտասարդ մարտիկների վրայ: Բագրատի միջոցով ի յայտ էին գալիս բանակային կատարեալ կարգապահութիւնը եւ բնաւորութեան համեստութիւնը: Նա ամէնուր յարգում էր զինտրական հրամանատարներին եւ չէր պատահի, ասենք, պատուի չառնէր, եթէ ինքը լինէր սենեակում եւ մէկն ու մէկը հրամանատարներից ներս մտնէր: Մեր բանակում բանակային կարգապահութեան այդ ձեւերը դեռեւս մշակուած չէին եւ դա անպայման դրական մթնոլորտ ու լաւ օրինակ էր ծառայում:

Շատ կարճ ժամանակում Բագրատը գումարտակի հրամանատարական ողջ անձնակազմի ուշադրութիւնը գրաւեց իր վրայ՝ իր խոնարհութեամբ, բանիմացութեամբ եւ կարգապահութեամբ: Ես յիշում եմ Պետոյի խօսքերը. «Հարմի՛կ, էս ինչ լաւ տղայ է: Էսպիսի մարդիկ ունէք Պարսկաստանում, ինչի՞ չէք բերում: Պահել էք ո՞ր օրուայ համար»:

Բագրատը մեծ փորձ ունէր եւ կարող էր իր համար պահանջել հրամանատարական գործ, սակայն նա համեստութեան տիպար զինուոր լինելով նախընտրեց հանդէս գալ իբրեւ շարքային զինուոր: Բագրատը, 5 ամսուայ իր ծառայութեան ընթացքին մասնակցեց Արցախի համար ծանրագոյն ժամանակաշրջանի բոլոր մարտերին եւ իր ներդրումը ունեցաւ զօրամասի յաղթանակների մէջ: 93ի Ապրիլին նա մեկնեց իր ծննդավայրը՝ Իրան, որտեղ իրեն էր սպասում իր հարսնացուն: Նրանք ամուսնացան եւ ընտանեկան կեանքն իր հոգսաշատ կարիքներով այլեւս հնարաւորութիւն չտուեց Բագրատին կրկին անգամ գալ Արցախ: Սակայն նա իր գործը կատարեց, եւ մենք լիովին բաւարարուած էինք մեր ընկերոջ վերաբերմունքից դէպի իր Հայրենիքը:

1998ի Օգոստոսին ստացանք նրա մահուան բօթը, Բագրատը աւտովթարի է ենթարկուել եւ մահացել: Նա ունէր մէկ աղջիկ:

Բագրատն անպայման կը յիշուի իբրեւ Հայրենիքի նուիրեալ զինուոր եւ արժանաւոր դաշնակցական:

Ա.Պ.